



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

քաղաք Հրազդան

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թ.

**ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Վիգեն Գրիգորյանը, Խաչիկ Մուրադյանը, Ռոմիկ Ներսիսյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վարուժան Սաֆարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՌՈՒԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի.

Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 02 հերթական նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի N 104-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 148-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
3. Նվազագույն ամսական աշխատավարձի պահպանման նպատակով լրավճար սահմանելու մասին
4. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբեր 14-ի N 151 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
5. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 152 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
6. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N154 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
7. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 156 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
8. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 157 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 143 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 31-ի N 84 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
10. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 14-ի N 58 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
11. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 18-ի N 40 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
12. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 155 և 2014 թվականի մարտի 21-ի N 29 որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին
13. Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղլույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույք օտարելու մասին
14. Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օտարելու մասին
15. Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկին անհատույց գույք օտարելու մասին
16. Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկին անհատույց գույք օտարելու մասին
17. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 175 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
18. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 176-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
19. Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
20. Ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին
21. Ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին
22. Ֆինանսական նվիրատվություն ցուցաբերելու մասին
23. Տեղական վճարի գումարը հետ վերադարձնելու մասին
24. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող ոչ պիտանի գույքի դուրս գրման մասին
25. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 11.0 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության մասին
26. Կադաստրային քարտեզում հայտնաբերված անճշտության ուղղում կատարելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին
27. «Կեչառք» ԲԲԸ-ի կողմից ձեռք բերված բազմաբնակարան բնակելի շենքի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
28. Քնարիկ Մարգարյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
29. Հրազդան համայնքի ավագանու մի շարք որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին
30. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
31. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
32. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով

օտարելու մասին

33. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու և Հրազդանի համայնքապետարանի ու «Հրազդանի ՃՇՇՁ» բաց բաժնետիրական ընկերության միջև կնքված 2014 թվականի հունիսի քսաներեքի հողամասի վարձակալության պայմանագիրը դադարեցնելու մասին

34. Սուբվենցիայի հայտերին հավանություն տալու մասին

35. Հրազդան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի 2020 թվականի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին

36. Տեղական վճարների արտոնություն կիրառելու մասին

37. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

38. Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին

39. Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին

40. Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին

41. Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին

42. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 125 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

43. Հրազդան համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 13-ի N 9 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 09/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 104-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Դեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի <<Հրազդան համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները, սոցիալական պաշտպանության բնագավառում Հրազդան համայնքի կամավոր խնդիրների և դրանց ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին>> N 104-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

2. Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 10-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 148-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Դեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից 2021 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափերը և կիրառվող արտոնությունները հաստատելու մասին» N 148-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հրազդանի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, և արվեստի դպրոցներ) ծառայություններից օգտվող մեկ երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի չափը յուրաքանչյուր ամսվա համար սահմանել 3000 (երեք հազար) դրամ, բացառությամբ նկարչական բաժին հաճախողների՝ 2000 (երկու հազար) դրամ, և թատերական բաժին հաճախողների՝ 1000 (մեկ հազար) դրամ:»:

2) Որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) միննույն ընտանիքից երկու և ավելի երեխաների հաճախելու դեպքում՝ երկրորդ և հաջորդ երեխաների համար,»:

3) Որոշման 4-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5) հաշմանդամության 1-ին կամ 2-րդ կարգ ունեցող ծնողների երեխաների համար:»:

4) Որոշման 5-րդ կետի «(երաժշտական և արվեստի դպրոցներ)» բառերը հանել:

5) Որոշման 5-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) հաշմանդամության 1-ին կամ 2-րդ կարգ ունեցող ծնողների երեխաների համար,»:

6) Որոշման 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցվող ծառայություններից օգտվողների համար սահմանել արտոնություն՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝

1) երեխան երկկողմանի ծնողազուրկ է,

2) երեխայի ծնողը զոհվել է Արցախյան պատերազմում:»:

2. Որոշման 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ ենթակետով. «6) ասեղնագործության, տիկնիկագործության և նկարչության խմբի համար՝ 3000 (երեք հազար) դրամ:»:

3. Որոշման 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով. «4) դատարանի վճռով ծնողներից մեկին անգործունակ ճանաչված ընտանիքների երեխաների համար:»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 11-Ն/

Լսեցին

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՐԱՎՃԱՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով.

1. Հրազդան համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի այն դրույքաչափերի նկատմամբ, որոնց չափը կազմել է 2021 թվականի հունվար ամսվա համար 93.000 դրամ, սահմանել լրավճար 289 դրամի չափով:

2. Հրազդան համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի այն դրույքաչափերի նկատմամբ, որոնց չափը կազմում է 93.000 դրամ, 2021 թվականի փետրվար և հետագա ամիսների համար սահմանել լրավճար 300 դրամի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը և տարածվում է նաև 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 12/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 14-Ի N 151 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 151 որոշման N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 1-ին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 13/

Լսեցին

ՀՐԱԶԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 152 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների, մշակութային և սպորտային հիմնարկների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 152 որոշման NN 13, 14,15,16, 17,18,19 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման NN 1,2,3,4,5,6,7 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 01-ին :

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14/

Լսեցին

ՀՐԱԶԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N154 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N154 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 1-ին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15/

Լսեցին

ՀՐԱԶԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 156 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդված 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրագրան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրագրանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N156 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 01-ին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 16/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 157 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդված 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրագրան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրագրանի համայնքապետարանի «Մաքուր Հրագրան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N157 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 01-ին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 17/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 143 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 84 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրագրան համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 18-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 143 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրագրան համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 31-ի «Հրագրանի համայնքապետարանի ենթակայության «Մաքուր Հրագրան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, հաստիքացուցակը ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու

մասին» N 84 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 18/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 58 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 14-ի «Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և կանոնադրությունը հաստատելու մասին» N 58 որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 19/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 40 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 18-ի «Հրազդանի համայնքապետարանի «Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկը «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը, կանոնադրությունը և ամրացվող գույքի կազմը հաստատելու մասին» N 40 որոշմամբ հաստատված N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 20/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 155 ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 29 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդված 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N155 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդան համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 21-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 01-ին:
4. Սույն որոշման 2-րդ կետն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 21/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀՐԱԶԴԱՆՔԱՂԼՈՒՅՍ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով և 9-րդ հոդվածի 5-րդ մասով.

1. Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օտարել Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող հետևյալ գույքը.
 - 1) 507.500 (հինգ հարյուր յոթ հազար հինգ հարյուր) դրամ արժողությամբ 25 հատ էլեկտրական հենասյուն (100մմ),
 - 2) 2500 (երկու հազար) դրամ արժողությամբ 50 հատ ֆարֆուրե մեկուսիչ,
 - 3) 19.987.500 (տասնինը միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ արժողությամբ 246 հատ հենասյուններով լուսավորության ցանց:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 22/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով և 9-րդ հոդվածի 5-րդ մասով.

1. Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող 80 հատ «մարմնամարզական պատ» գույքը անհատույց օտարել սույն որոշման հավելվածով ներկայացված համայնքային ենթակայության կազմակերպություններին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 23/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ» ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

1. Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկին անհատույց օտարել Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող 732.000 (յոթ հարյուր երեսուն երկու հազար) դրամ արժողությամբ KIT 980/A6450 SRS համակարգը և 750.000 (յոթ հարյուր հիսուն հազար) դրամ արժողությամբ 2019 թվականի արտադրության ձյուն մաքրող սարքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 24/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ» ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

1. Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկին անհատույց օտարել Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող հետևյալ գույքը.

- 1) 1.980.000 (մեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար) դրամ արժողությամբ 18 հատ աղբարկղերի տեղադրման վայրի ցանկապատ,
- 2) 252.000 (երկու հարյուր հիսուն երկու հազար) դրամ արժողությամբ 20 հատ աղբաման,
- 3) 32.000 (երեսուն երկու հազար) դրամ արժողությամբ 4 հատ աղբարկղ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 25/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 175 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Ֆինանսական նվիրատվություն ցուցաբերելու մասին» N 175 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 26/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 176-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածի 4-րդ մասով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N176-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 27-Ն/

Լսեցին

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով

1. Հաստատել Հրազդան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն N 1, 2, 3 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 28/

Լսեցին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 60 շենքի 4 բնակարանի բնակչուհի Գոհար Ղազարյանի 2021 թվականի հունվարի 11-ի Դ-01, Ջրառատ թաղամասի 377 տան բնակչուհի Ռոզա Սարգսյանի 2021 թվականի հունվարի 22-ի Դ-62, Շահումյան 188 տան բնակիչ Արմեն Հայրապետյանի 2021 թվականի հունվարի 18-ի Դ-34, Միկրոշրջան թաղամասի 42 շենքի 36 բնակարանի բնակիչ Սամվել Հակոբյանի 2021 թվականի հունվարի 11-ի Դ-02, Միկրոշրջան թաղամասի 27 շենքի 36 բնակարանի բնակիչ Գնել Համբարձումյանի Դ-60 դիմումները.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10.07.01 ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից որպես օգնության գումար 2021 թվականի հունվարից դեկտեմբեր ամիսը ներառյալ ամեն ամիս հատկացնել հետևյալ անձանց՝ Միկրոշրջան թաղամասի 60 շենքի 4 բնակարանի բնակչուհի Գոհար Ղազարյանին 20000 /քսան հազար/ դրամ, Ջրառատ թաղամասի 377 տան բնակչուհի Ռոզա Սարգսյանին 20000 /քսան հազար/ դրամ, Շահումյան 188 տան բնակիչ Արմեն Հայրապետյանին 20000 /քսան հազար/ դրամ, Միկրոշրջան թաղամասի 42 շենքի 36 բնակարանի բնակիչ Սամվել Հակոբյանին 40000 /քառասուն հազար/ դրամ, Միկրոշրջան թաղամասի 27 շենքի 36 բնակարանի բնակիչ Գնել Համբարձումյանին 40000 /քառասուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 29/

Լսեցին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 130 շենքի 33 բնակարանի բնակիչ Արտակ Համբարձումյանի 2021 թվականի հունվարի 27-ի Դ-70, Շինարարների փողոցի 15 տան բնակիչ Վախթանգ Ալեքսանյանի 2021 թվականի հունվարի 27-ի Դ-68, Միկրոշրջան թաղամասի 86 շենքի 32 բնակարանի բնակիչ Արկադի Մարկոսյանի 2021 թվականի հունվարի 29-ի Դ-74 դիմումները.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10.07.01 ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից որպես միանվագ օգնության գումար հատկացնել հետևյալ անձանց՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 130 շենքի 33 բնակարանի բնակիչ Արտակ Համբարձումյանին՝ 90000/իննսուն հազար/դրամ, Շինարարների փողոցի 15 տան բնակիչ Վախթանգ Ալեքսանյանին՝ 50000 /հիսուն/ հազար դրամ, Միկրոշրջան թաղամասի 86 շենքի 32 բնակարանի բնակիչ Արկադի Մարկոսյանին՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 30/

Լսեցին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՎԻԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածը և «Հայկական Կարմիր Խաչ» ընկերության Գլխավոր քարտուղար Ա.Եղիազարյանի 2021 թվականի փետրվարի 17-ի N Ս-204 դիմումը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածում «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» /4819/ հոդվածով նախատեսված ծախսերից որպես նվիրատվություն 2021 թվականի մարտ ամսից մինչև 2021 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ յուրաքանչյուր ամիս 30000/երեսուն հազար/ դրամ փոխանցել «Հայկական Կարմիր

Խաչ» ընկերությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31/

Լսեցին

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական տուրքեր և վճարների մասին» օրենքի 17-րդ հոդվածով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 256 շենքի 26 բնակարանի բնակիչ Ռոբերտ Շահջանյանի 2021 թվականի հունվարի 21-ի Կ-71 դիմումը.

1.Հրազդանի համայնքապետարանի 900125001322 հաշվեհամարին որպես հողամասերի կառուցապատման իրավունքի վարձավճար վճարված գումարից Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 256 շենքի 26 բնակարանի բնակիչ Ռոբերտ Շահջանյանին հետ վերադարձնել սխալմամբ մուծված 15000 /տասնհինգ հազար/ դրամ գումարը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՄ ԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի 1-ին մասով.

Թույլատրել դուրս գրելու Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող մաշված, ժամկետանց, այլևս գործածության ոչ պիտանի գույքը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 11.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով, հիմք ընդունելով Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հրազդան համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ 2021 թվականի փետրվարի 3-ի N 1/փ- 13 դրական եզրակացությունը.

1. Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող՝ Ջրառատ թաղամասի Հրազդան-Ջովաբեր-Դմաշեն ավտոճանապարհին հարող տարածքում համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերից 11.0 հա մակերեսով հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N31012018-07-0062, գաղտնաբառ՝ NPZGT5CCPBA) նպատակային նշանակությունը գյուղատնտեսականից փոփոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի, արևային ֆոտովոլտային կայան կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 34/

Լսեցին

ԿԱՂԱՍՏՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի N186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջով.

1. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 1831-Ն որոշմամբ՝ քարտեզագրման անճշտության հետևանքով, որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված հետևյալ հողամասերը ճանաչել Հրազդան համայնքի սեփականություն.

1) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Ջորավար Անդրանիկի պողոտա 6/2 հասցեում գտնվող 22.48քմ մակերեսով (ծածկագիր՝ 0463-0021),

2) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի Ջորավար Անդրանիկի պողոտա 58/10 հասցեում գտնվող 73.0քմ մակերեսով (ծածկագիր՝ 0332-0027):

3) Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Սպանդարյան փողոց 48 հասցեում գտնվող 357.5քմ մակերեսով (ծածկագիր՝ 0623-0064):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 35/

Լսեցին

«ԿԵՉԱՌՔ» ԲԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «Կեչառք» ԲԲԸ-ի կողմից ձեռք բերված անշարժ գույքի Հայաստանի Հանրապետության պետական ունեցվածքի և ապապետականացման վարչության սեփականաշնորհման պայմանագիրը և «Կեչառք» ԲԲԸ-ի տնօրեն Ա. Միմոնյանի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի դիմումը.

1. Ուղղակի վաճառքով օտարել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս թիվ 203 հասցեում գտնվող «Կեչառք» ԲԲԸ-ի կողմից ձեռք բերված բազմաբնակարան բնակելի շենքի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող 1400.0քմ մակերեսով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (կադաստրային ծածկագիր 0511-0001)՝ 4 042 500 /չորս միլիոն քառասուներկու հազար հինգ հարյուր / դրամ կադաստրային արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 36/

Լսեցին

ՔՆԱՐԻՎ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Քնարիկ Մարգարյանի 2021 թվականի հունվարի 27-ի դիմումը.

1. Ուղղակի վաճառքով օտարել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 98/15 հասցեում գտնվող, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 98 շենքի թիվ 3 բնակարանի բնակչուհի Քնարիկ Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող 30.6քմ մակերեսով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում

չղասվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (սեփականության (օգտագործման) իրավունքի վկայական 1257901, տրված՝ 2005 թվականի մարտի 05-ին)՝ 209150 /երկու հարյուր ինը հազար մեկ հարյուր հիսուն/ դրամ կադաստրային արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 37/

Լսեցին

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 14-ի «Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին» N 89 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «<255 000(երկու հարյուր հիսունհինգ հազար)>> բառերը փոխարինել «<907000 (ինը հարյուր յոթ հազար)>> բառերով:

2. Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 05-ի «Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին» N 165 որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետում «<1 300 000(մեկ միլիոն երեք հարյուր հազար)>> բառերը փոխարինել «<1 507 000(մեկ միլիոն հինգ հարյուր յոթ հազար)>> բառերով:

3. Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին» N 197 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետի 1-ին ենթակետում «<550 000(հինգ հարյուր հիսուն հազար)>> բառերը փոխարինել «<927 000(ինը հարյուր քսանյոթ հազար)>> բառերով,

2) 1-ին կետի 10-րդ ենթակետում «<550 000(հինգ հարյուր հիսուն հազար)>> բառերը փոխարինել «<1 908 000(մեկ միլիոն ինը հարյուր ութ հազար)>> բառերով,

3) 1-ին կետի 16-րդ ենթակետում «<200 000 (երկու հարյուր հազար)>> բառերը փոխարինել «<206 000 (երկու հարյուր վեց հազար)>> բառերով:

4. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 25-ի «Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին» N 37 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետի 6-րդ ենթակետում «<100 000(մեկ հարյուր հազար)>> բառերը փոխարինել «<137 000(մեկ հարյուր երեսունյոթ հազար)>> բառերով,

2) 1-ին կետի 12-րդ ենթակետում «<420 000(չորս հարյուր քսան հազար)>> բառերը փոխարինել «<681 000(վեց հարյուր ութսունմեկ հազար)>> բառերով,

3) 1-ին կետի 13-րդ ենթակետում «<200 000(երկու հարյուր հազար)>> բառերը փոխարինել

<<334 000 (երեք հարյուր երեսունչորս հազար)>> բառերով:

4) 1-ին կետի 15-րդ ենթակետում <<350 000(երեք հարյուր հիսուն հազար)>> բառերը փոխարինել <<387 000 (երեք հարյուր ութսունյոթ հազար)>> բառերով:

5.Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 13-ի <<Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին>> N 53 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)1-ին կետի 5-րդ ենթակետում <<550 000(հինգ հարյուր հիսուն հազար)>> բառերը փոխարինել <<1 213 000(մեկ միլիոն երկու հարյուր տասներեք հազար)>> բառերով,

2)1-ին կետի 6-րդ ենթակետում <<450 000(չորս հարյուր հիսուն հազար)>> բառերը փոխարինել <<1 733 000(մեկ միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար)>> բառերով,

3)1-ին կետի 8-րդ ենթակետում <<600 000(վեց հարյուր հազար)>> բառերը փոխարինել <<1 049 000(մեկ միլիոն քառասունինը հազար)>> բառերով,

4)1-ին կետի 9-րդ ենթակետում <<250 000(երկու հարյուր հիսուն հազար)>> բառերը փոխարինել <<350 000 (երեք հարյուր հիսուն հազար)>> բառերով:

5)1-ին կետի 11-րդ ենթակետում <<500 000(հինգ հարյուր հազար)>> բառերը փոխարինել <<1 666 000 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար)>> բառերով:

6.Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 10-ի <<Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի, գյուղատնտեսական և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին>> N 82 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)1-ին կետի 1-ին ենթակետում <<5 000 000(հինգ միլիոն)>> բառերը փոխարինել <<10 333 000 (տասը միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար)>> բառերով,

2)1-ին կետի 20-րդ ենթակետում <<300 000(երեք հարյուր հազար)>> բառերը փոխարինել <<493 000(չորս հարյուր ինսուներեք հազար)>> բառերով,

3)1-ին կետի 22-րդ ենթակետում <<200 000(երկու հարյուր հազար)>> բառերը փոխարինել <<267 000 (երկու հարյուր վաթսունյոթ հազար)>> բառերով:

4)1-ին կետի 27-րդ ենթակետում <<1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար)>> բառերը փոխարինել <<1 878 000 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունութ հազար)>> բառերով:

7.Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 13-ի <<Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին>> N 95 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում <<300 000(երեք հարյուր հազար)>> բառերը փոխարինել <<411 000(չորս հարյուր տասնմեկ հազար)>> բառերով:

8.Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի <<Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին>> N 164 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)1-ին կետի 1-ին ենթակետում <<140 000 (մեկ հարյուր քառասուն հազար)>> բառերը փոխարինել <<157 000(մեկ հարյուր հիսունյոթ հազար)>> բառերով,

2) 1-ին կետի 2-րդ ենթակետում <<350 000(երեք հարյուր հիսուն հազար)>> բառերը փոխարինել <<486 000(չորս հարյուր ութսունվեց հազար)>> բառերով,

3)1-ին կետի 5-րդ ենթակետում <<180 000(մեկ հարյուր ութսուն հազար)>> բառերը փոխարինել <<206 000 (երկու հարյուր վեց հազար)>> բառերով:

4)1-ին կետի 6-րդ ենթակետում <<130 000(մեկ հարյուր երեսուն հազար)>> բառերը փոխարինել <<165 000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար)>> բառերով,

5)1-ին կետի 10-րդ ենթակետում <<650 000(վեց հարյուր հիսուն հազար)>> բառերը

փոխարինել <<921 000 (ինը հարյուր քսանմեկ հազար)>> բառերով:
9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 38/

Լսեցին

**ՀՐԱԶԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՉ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով.

1.Ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված, բնակավայրերի նպատակային նշանակության հետևյալ հողամասերը.

1) Կենտրոն թաղամաս 79/3 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասը՝ 20.0քմ մակերեսով(ավտոտնակ կառուցելու)՝ 12 000(տասներկու հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով:

2) Կենտրոն թաղամաս 4/4 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասը՝ 19.95քմ մակերեսով(ավտոտնակ կառուցելու)՝ 12 000(տասներկու հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով:

3) Կենտրոն թաղամաս 54/33 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասը՝ 20.0քմ մակերեսով(ավտոտնակ կառուցելու)՝ 12 000(տասներկու հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով:

4) Հարավային թաղամաս, Ռ.Միքայելյան 215 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասը՝ 19,0քմ մակերեսով (ավտոտնակ տեղադրելու)՝ 12 000(հինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 39/

Լսեցին

**ՀՐԱԶԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետով.

1. Թուլյատրել մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված հետևյալ հողամասերը.

1) Միկրոշրջան թաղամաս 91/22 հասցեում գտնվող 24.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 13 000 (տասներեք հազար) դրամ մեկնարկային վարձավճարով 99 (իննսունինը) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0146-0255):

2) Կենտրոն թաղամաս 77/8 հասցեում գտնվող 24.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ մեկնարկային վարձավճարով 99 (իննսունինը) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0456-0046):

2. Մրցույթի մասնակցության մուտքի վճարը սահմանել 2000 (երկու հազար) դրամ, մեկ քայլի չափը սահմանել 1000 (մեկ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով.

1. Աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող հետևյալ հողամասերը.

1) Միկրոշրջան թաղամաս 82/30 հասցեում գտնվող 24.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 107 000 (մեկ հարյուր յոթ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0146-0254):

2) Միկրոշրջան թաղամաս 56/1 հասցեում գտնվող 30.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 87 000 (ութսունյոթ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0115-0080):

3) Միկրոշրջան թաղամաս 309/2 հասցեում գտնվող 44.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 128 000 (մեկ հարյուր քսանութ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0523-0058):

- 4)Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 3/4 հասցեում գտնվող 168.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 486 000(չորս հարյուր ութսունվեց հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0109-0014):
- 5)Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 3/5 հասցեում գտնվող 168.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 486 000 (չորս հարյուր ութսունվեց հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0109-0015):
- 6)Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 3/7 հասցեում գտնվող 300.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 867 000(ութ հարյուր վաթսունյոթ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0109-0016):
- 7)Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 246/1 հասցեում գտնվող 70.5 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 204 000 (երկու հարյուր չորս հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0110-0148):
- 8)Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 259/2 հասցեում գտնվող 24.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 70 000 (յոթանասուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0514-0030):
- 9)Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 274/2 հասցեում գտնվող 42.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 122 000 (մեկ հարյուր քսաներկու հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0110-0149):
- 10)Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 14/1 հասցեում գտնվող 180.0քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 520 000 (հինգ հարյուր քսան հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0513-0120):
- 11)Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 16/4 հասցեում գտնվող 208.8քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 603 000 (վեց հարյուր երեք հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0513-0126):
- 12)Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 22/12 հասցեում գտնվող 24.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 70 000(յոթանասուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0513-0121):
- 13)Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 22/13 հասցեում գտնվող 24.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 70 000 (յոթանասուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001- 0513-0122):
- 14)Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 22/14 հասցեում գտնվող 24.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 70 000 (յոթանասուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001- 0513-0125):
- 15)Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 22/15 հասցեում գտնվող 24.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 70 000 (յոթանասուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001- 0513-0123):
- 16)Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 15/16 հասցեում գտնվող 144.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 416 000 (չորս հարյուր տասնվեց հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0513-0124):
- 17)Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ 73 հասցեում գտնվող 2000.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 13 669 000(տասներեք միլիոն վեց հարյուր վաթսունինը հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0444-0063):
- 18)Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 40/2 հասցեում գտնվող 67.7քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 463 000 (չորս հարյուր վաթսուներեք հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0461-0038):
- 19)Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 43/3 հասցեում գտնվող 24.0

քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 165 000 (մեկ հարյուր վաթսուներեք հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0457-0087):

20) Կենտրոն թաղամաս, Ջորավար Անդրանիկի պողոտա 43/4 հասցեում գտնվող 24.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 165 000 (մեկ հարյուր վաթսուներեք հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0457-0086):

21) Կենտրոն թաղամաս, Ջորավար Անդրանիկի պողոտա 43/5 հասցեում գտնվող 24.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 165 000 (մեկ հարյուր վաթսուներեք հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0457-0088):

22) Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 133 հասցեում գտնվող 225.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 1 538 000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսունույթ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0442-0130):

23) Մաքրավան թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 54/2 հասցեում գտնվող 62.6 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 428 000 (չորս հարյուր քսանույթ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0411-0044):

24) Վանատուր թաղամաս, Հայ Ֆիդայիների փողոց 12/3 հասցեում գտնվող 400.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 1 777 000 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունյոթ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0522-0035):

25) Վանատուր թաղամաս, Ջորավար Անդրանիկի պողոտա 83/1 հասցեում գտնվող 400.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 1 777 000 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունյոթ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0343-0070):

26) Վանատուր թաղամաս 6/6 հասցեում գտնվող 30.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 134 000 (մեկ հարյուր երեսունչորս հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0304-0099):

27) Հարավային թաղամաս, Բաֆֆու փողոց 3-րդ նրբանցք թիվ 42 հասցեում գտնվող 1000.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 2 888 000 (երկու միլիոն ութ հարյուր ութսունույթ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային համարը՝ 07.001.289.003):

28) Մարշալ Բաղրամյան թաղամաս, 8-րդ փողոց 25/2 հասցեում գտնվող 56.7 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 252 000 (երկու հարյուր հիսուներկու հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0510-0161):

29) Մարշալ Բաղրամյան թաղամաս, 8-րդ փողոց 33/1 հասցեում գտնվող 116.8 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 520 000 (հինգ հարյուր քսան հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0510-0160):

30) Մարշալ Բաղրամյան թաղամաս, 5-րդ փողոց, 1-ին նրբանցք 13/1 հասցեում գտնվող 40.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 178 000 (մեկ հարյուր յոթանասունույթ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0509-0260):

31) Մարշալ Բաղրամյան թաղամաս, 5-րդ փողոց, 2-րդ նրբանցք 72 հասցեում գտնվող 60.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 267 000 (երկու հարյուր վաթսուներեք հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0509-0284):

32) Ջրառատ թաղամաս, Գործարանային փողոց 47/1 հասցեում գտնվող 2063.8 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 3 876 000 (երեք միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-

001-0159-0017):

33) Զրառատ թաղամաս, Գործարանային փողոց 16/1 հասցեում գտնվող բնակավայրերի այլ հողերից 229.86քմ մակերեսով հողամասը՝ 664 000 (վեց հարյուր վաթսուհինգ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0161-0043):

34) Զրառատ թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերից 0.604899 հա մակերեսով հողամասը՝ 720 000 (յոթ հարյուր քսան հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0873-0009):

35) Զրառատ թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերից 0.24615 հա մակերեսով հողամասը՝ 185 000 (մեկ հարյուր ութսունհինգ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0968-0042):

36) Զրառատ թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերից 0.66976 հա մակերեսով հողամասը՝ 503 000 (հինգ հարյուր երեք հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0968-0041):

37) Վանատուր թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքից 0.04465 հա մակերեսով հողամասը՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-3933-0002):

2. Աճուրդի մասնակցության նախապայմանի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 41/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՈՒ <<ՀՐԱԶԴԱՆԻ ՃՇՇ>> ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ ՔՄԱՆԵՐԵՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի <<ը>> ենթակետով, 46 . 2-րդ կետի <<թ>> ենթակետով, հիմք ընդունելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2021 թվականի փետրվարի 1-ի NL-628 լեռնահատկացման ակտը, Հրազդանի համայնքապետարանի ու <<Հրազդանի ՃՇՇ>> բաց բաժնետիրական ընկերության միջև կնքված 2014 թվականի հունիսի 23-ի հողամասի վարձակալության պայմանագրի 6.2-րդ կետը և <<Հրազդանի ՃՇՇ>> բաց բաժնետիրական ընկերության տնօրենի դիմումը.

1. Թույլատրել վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել <<Հրազդանի ՃՇՇ>> բաց բաժնետիրական ընկերությանը՝ Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Կաքավաձոր թաղամաս տանող ավտոճանապարհ 13 հասցեում

գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերից 3.5 հա հողամասը՝ 1 225 000 (մեկ միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 37 (երեսունյոթ) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝ 07.001.0271.0171) ընդերքօգտագործման նպատակով:

2. Դադարեցնել Հրազդանի համայնքապետարանի և «Հրազդանի ՃՇՇՁ» բաց բաժնետիրական ընկերության միջև կնքված 2014 թվականի հունիսի 23-ի հողամասի վարձակալության պայմանագիրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 42/

Լսեցին

ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆՈՒՀԻ ԲԱՐԵՂԱՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 12-րդ կետով.

1. Հավանություն տալ 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերին.

1) Հրազդան համայնքի խաղահրապարակների կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 62857,1 հազար ՀՀ դրամ:

2) Հրազդան համայնքի վարչական տարածքում կանգառների կառուցում, տարածքի բարեկարգում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 55000,0 հազար ՀՀ դրամ:

3) Հրազդան համայնքի Թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 160000,0 հազար ՀՀ դրամ:

4) Բազմաֆունկցիոնալ մեքենայի ձեռքբերում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 70000,0 հազար ՀՀ դրամ:

5) Հրազդան համայնքի բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքների իրականացում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 239000,0 հազար ՀՀ դրամ:

6) Հրազդան համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրականացում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 236000,0 հազար ՀՀ դրամ:

7) Հրազդան համայնքի ներհամայնքային ճանապարհների լուսավորության ցանցի արդիականացում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 104000,0 հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 43/

Լսեցին

ՀՐԱԶԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆՈՒՀԻ ԲԱՐԵՂԱՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի.

1. Հաստատել Հրազդան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի 2020 թվականի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44/

Լսեցին

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ենթակայության արվեստի և երաժշտական դպրոցներ, մշակութային և սպորտային հաստատություններ հաճախող երեխաների տեղական վճարները ուսումնասիրելու և զեղչելու նպատակով ստեղծված հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 11-ի թիվ 1 արձանագրությունը.

1. Նվազեցնել Հրազդան համայնքի ենթակայության արվեստի և երաժշտական դպրոցներ, մշակութային և սպորտային հաստատություններ հաճախող հետևյալ երեխաների տեղական վճարները 50 %-ի չափով մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը.

- 1) Սամվել Սուրենի Ալեքսանյան - «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկ,
- 2) Սևակ Սուրենի Ալեքսանյան - «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկ,
- 3) Նարեկ Հրայրի Մարգարյան - «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկ,
- 4) Էրիկ Հրայրի Մարգարյան - «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկ,
- 5) Արամ Գուրգենի Տավարացյան - «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկ
- 6) Արթուր Գուրգենի Տավարացյան - «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկ,
- 7) Գոռ Իգորի Բեդյան - «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկ,
- 8) Անի Իգորի Բեդյան - «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» բյուջետային հիմնարկ:

2. Հրազդան համայնքի ենթակայության «Առնո Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող Մարի Արամի

Յարոյանին վարձավճարի վճարումից ազատել մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 45/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 09082013-07-0044), Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի 58 հասցեում գտնվող սպորտ դպրոցի շենքից 450 քառակուսի մետր մակերեսով տարածքը 3 (երեք) տարի ժամկետով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել Էդուարդ Արսյումի Գևորգյանին՝ ամեն օր, ժամը 18:00-ից մինչև 22:00-ը ֆուտբոլային դասընթացներ անցկացնելու համար:
2. Վարձավճարի չափը հունվար, փետրվար, մարտ և դեկտեմբեր ամիսներին սահմանել 50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ապրիլից նոյեմբեր ամիսներին սահմանել 30.000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 46/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

1. Հրազդան համայնքի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 4-րդ փողոցի թիվ 20/3 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի շենքից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N11072018-07-0067, տրված՝ 11 հուլիսի 2018 թվականին) 22,23 քառակուսի մետր մակերեսով տարածքը հինգ տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Միկրոշրջան-7» համատիրությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 47/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՍ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

1. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 20 շենքի 41.4 քառակուսի մետր մակերեսով N43 բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական՝ N2181665, տրված՝ 11.08.2006 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող (բնակելի տարածության արխիվային տեղեկանք, տրված՝ 03.08.2006 թվականին) Սամվել Ռուբենի Թավաքայանին, (ծնված՝ 21.10.1964 թվականին, անձնագիր՝ AN0607875, տրված՝ 08.08.2013 թվականին, 049-ի կողմից):

2. Համասեփականատերեր ճանաչել.

1) Լուսիկ Ռաֆիկի Թավաքայանին՝ կինը,

2) Ռուբեն Սամվելի Թավաքայանին՝ տղան,

3) Արմեն Սամվելի Թավաքայանին՝ տղան:

3. Սահմանել, որ սեփականության իրավունքի գրանցման պահից 5 տարվա ընթացքում գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 48/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՍ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

1. Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 95 շենքի 21.61 քառակուսի մետր մակերեսով N52 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N26012021-07-0023, տրված՝ 26.01.2021 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող Թուխիկ Մանվելի Պողոսյանին, (ծնված՝ 13.02.1963 թվականին, անձնագիր՝ AG0669792, տրված՝ 28.03.2006 թվականին, 049-ի կողմից):

2. Սահմանել, որ սեփականության իրավունքի գրանցման պահից 5 տարվա ընթացքում գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 49/

Լսեցին

ՀՐԱԶԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈՒԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

1. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 95 շենքի 42.07 քառակուսի մետր մակերեսով N15 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N16022021-07-0134, տրված՝ 16.02.2021 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող (բնակելի տարածության արխիվային տեղեկանք N385, տրված՝ 28.06.2007 թվականին) Հասմիկ Եսայու Հայրապետյանին, (ծնված՝ 00.00.1958 թվականին, անձնագիր՝ AN0377813, տրված՝ 21.02.2013 թվականին, 049-ի կողմից):

2. Համասեփականատերեր ճանաչել.

1. Կարինե Գևորգի Շախջանյանին՝ դուստրը,

2. Ռոդես Գևորգի Շախջանյանին՝ թոռը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 50/

Լսեցին

ՀՐԱԶԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 125 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈՒԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին» N125 որոշման 1-ին կետի «Գալինա Մարդիի Մովսիսյանցին» բառերը փոխարինել «Գալինա Մարդիի Մովսեսյանցին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 51/

Լսեցին

ՀՐԱԶԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 9 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈՒԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 13-ի «Հրազդան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի և ոչ բնակելի տարածքների օտարման մասին» N 9 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 52/

Ավագանու անդամներ՝

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԿՐՏՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՍՄԱՅԼՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Վ. ՍԱՅԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը





Հավելված
Հրագրան համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 25-ի
N 10 -Ն որոշման

Հավելված
Հրագրան համայնքի ավագանու
2018 թվականի օգոստոսի 28-ի
N104 -Ն որոշման

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԶԱՓՈՂՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԶԱՓԵՐԸ**

1. Հրագրան համայնքի կամավոր խնդիրներն են՝

- 1) բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.
- 2) արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանն աջակցելը.
- 3) տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ զանգվածային միջոցառումների կազմակերպումը, ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը նպաստելը.
- 4) համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման նպաստումը, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացումը, հանգստի գոտիների ստեղծումը.
- 5) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների (անձանց) սոցիալական (դրամական) օգնության տրամադրման կազմակերպումը.
- 6) պետական բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև պետության կողմից հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացումը.
- 7) սոցիալական ծրագրերի իրականացմանը, սոցիալական պաշտպանության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեությանն աջակցելը:
- 8) բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանն աջակցումը.
- 9) բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը.
- 10) բնակչության սանիտարահիգիենիկ կրթության, առողջ ապրելակերպի քարոզչությունը.
- 11) սանիտարական վիճակի բարելավման աջակցումը:

2. Սոցիալական աջակցության (դրամական օգնության) վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներն են՝

2) անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող դեպքերը՝ բնակարանի հրդեհի, բնակարանի (մի մասի) փլուզման, ներսնային հաղորդակցուղիների վթարների, տարերային աղետների և այլ պատճառներով առաջացած ֆինանսական խնդիրների առկայությունը և նմանատիպ այլ հանգամանքները.

3) միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ, ծնողական խնամքից զրկված, հաշմանդամություն ունեցող և այլն երեխա լինելը, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանելը (18-23 տարեկան).

4) Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողի կամ կամավորականի անապահով ընտանիքների կարգավիճակում գտնվելը.

5) ընտանիքի անդամներից մեկի կամ մի քանիսի երկարատև, ինչպես նաև անսպասելի վրա հասած հիվանդությունը.

3. Սոցիալական աջակցությունը (դրամական Համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ կամավոր /սեփական/ լիազորությունները՝ սոցիալական պաշտպանության բնագավառում.

1) միջոցներ է ձեռնարկում հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին,

2) նպաստում է համայնքում բնակվող սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարմանը՝ կազմակերպելով տնային այցելություններ և հնարավորության դեպքում մատուցելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ կամ ուղղորդելով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ կամ մասնագիտացված այլ կազմակերպություններ:

4. Նշված լիազորություններն իրականացվում են թիրախային և հասցեական մոտեցմամբ:

5. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում, համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

6. Համայնքի ղեկավարին թույլատրվում է արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի (բնական և տեխնածին աղետներ) առաջացմամբ կամավոր լիազորությունների իրականացման համար հատկացնել համապատասխան ֆինանսական միջոցներ, բայց ոչ ավել, քան տվյալ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 1 (մեկ) տոկոսի չափով:

7. Կամավոր խնդիրների լուծման համար սահմանվում են աջակցության հետևյալ չափերը (առավելագույն չափերը Հայաստանի Հանրապետության դրամով կամ դրան համարժեք բնաիրային, ծառայությունների տեսքով)՝

- 1) համայնքի սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչին կամ ընտանիքին՝ 20.000 (քսան հազար) դրամ,
- 2) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած բնակչին (ընտանիքին)՝ մինչև 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
- 3) Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված անձանց ընտանիքին՝ միանվագ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
- 4) Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած անձանց կամ ընտանիքին՝ միանվագ 50.000 (հիսուն հազար) դրամ,
- 5) սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքի անդամի կամ հարազատ չունեցող բնակչի հուղարկավորության ծախսերի համար՝ մինչև 100.000 (հարյուր հազար) դրամ:
8. Մշակութային միջոցառումների կազմակերպման, իրականացման և մասնակցության համար՝ մինչև 20.000.000 (քսան միլիոն) դրամ՝ ըստ տվյալ տարվա բյուջեի հիմքում դրված միջոցառումների ցուցակի և դրա հիման վրա համայնքի ավագանու կողմից բյուջեով հաստատված հատկացումների շրջանակներում համայնքի ղեկավարի կայացրած որոշումների:
9. Սպորտային միջոցառումների կազմակերպման, իրականացման և մասնակցության համար՝ մինչև 5.000.000 (հինգ միլիոն)՝ ըստ տվյալ տարվա բյուջեի հիմքում դրված միջոցառումների ցուցակի և դրա հիման վրա համայնքի ավագանու կողմից բյուջեով հաստատված հատկացումների շրջանակներում համայնքի ղեկավարի կայացրած որոշումների:
10. Համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման շրջանակներում շահույթ չհետապնդող կազմակերպություններին և ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին հատկացվելիք (դրամաշնորհներ, նվիրատվություններ և սուբվենցիաներ) ֆինանսական միջոցների առավելագույն չափը սահմանվում է մինչև 1.000.000 (մեկ միլիոն) դրամ յուրաքանչյուրին (Հայաստանի Հանրապետության դրամով կամ դրան համարժեք բնաիրային, ծառայությունների տեսքով):
11. Կամավոր լիազորությունների իրականացման համար ֆինանսական միջոցներ հատկացվում են յուրաքանչյուր տարվա համար՝ ըստ տվյալ տարվա բյուջեի հիմքում դրված ծրագրերի:
12. Նույն անձին կամ ընտանիքին օրացուցային տարվա ընթացքում կարող է տրամադրվել մեկից ավելի անգամ սոցիալական աջակցություն:
13. Համայնքի ավագանու որոշմամբ կարող է տրամադրվել սույն որոշմամբ սահմանվածից ավելի չափով սոցիալական աջակցություն:
14. Արգելվում է սոցիալական աջակցության տրամադրումը համայնքում հաշվառում չունեցող և (կամ) համայնքում մշտական բնակիչ չհանդիսացող քաղաքացուն:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 104-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են ավագանու որոշմամբ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով:

Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչների մշակման համար հիմք են հանդիսացել «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 18-րդ հոդվածի դրույթները:

Անհրաժեշտությունից ելնելով առաջարկվում են փոփոխություններ կատարվել վերոնշյալ նախագծում:

Նախագիծը մշակվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա:

Նախագծով առաջարկվում է սահմանել Հրազդան համայնքի կամավոր խնդիրները և սոցիալական աջակցության չափորոշիչները, կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացման կարգը և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերը:

Նախագծով առաջարկվում է փոփոխել ֆինանսական միջոցների հատկացման չափերը: Մասնավորապես արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած բնակչին (ընտանիքին)՝ մինչև 200.000 դրամը առաջարկվում է դարձնել 300.000 դրամ, 3) Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված անձանց ընտանիքին՝ միանվագ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ, Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած անձանց կամ ընտանիքին՝ միանվագ 50.000 (հիսուն հազար) դրամ, սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքի անդամի կամ հարազատ չունեցող բնակչի հուղարկավորության ծախսերի համար՝ մինչև 100.000 (հարյուր հազար) դրամ:

Քանի որ Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի «Հրազդան համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները, սոցիալական պաշտպանության բնագավառում Հրազդան համայնքի կամավոր խնդիրների և դրանց ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին» N104-Ն որոշումը կրում է նորմատիվ բնույթ, ուստի նրա մեջ կատարվող փոփոխության նախագիծը ևս կրում է նորմատիվ բնույթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 148-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի, 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական տուրքերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 148-ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ավագանու որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մշակվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի, 34-րդ հոդվածի հիման վրա:

Նախագծով առաջարկվել է Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հրազդանի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, և արվեստի դպրոցներ) ծառայություններից օգտվող մեկ երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի չափը յուրաքանչյուր ամսվա համար սահմանել 3000 (երեք հազար) դրամ, բացառությամբ նկարչական բաժին հաճախողների՝ 2000 (երկու հազար) դրամ, և թատերական բաժին հաճախողների՝ 1000 (մեկ հազար) դրամ:»: Այսինքն անհրաժեշտություն է առաջացել ավելացնել նաև թատերական բաժին հաճախող երեխաների համար մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի չափը:

Որոշման 4-րդ կետի 5-րդ ենթակետը և 5-րդ կետի 3-րդ ենթակետը, որոնք սահմանում են դրույքաչափերի 50% նվազեցում, շարադրված են հետևյալ կերպ. «Արցախյան ազատամարտի մասնակիցների, հիվանդության և աշխատանքային հաշմանդամության կարգ ունեցող ծնողների երեխաների համար»: Ունենալով նորմի՝ հստակեցման և իրարամերժ մեկնաբանություններից խուսափելու նպատակ, Նախագծով առաջարկվել է կատարել փոփոխություն և վերոնշյալ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «հաշմանդամության 1-ին կամ 2-րդ կարգ ունեցող ծնողների երեխաների համար»:

Նախագծով առաջարկվում է նաև Որոշման 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության

մանկապարտեզների և արտադարձական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցվող ծառայություններից օգտվողների համար սահմանել արտոնություն՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝

1) երեխան երկկողմանի ծնողագուրկ է,

2) երեխայի ծնողը գոհվել է Արցախյան պատերազմում:>>:

Նախկինում Որոշման 6-րդ կետով սահմանված զրոյական դրույքաչափի արտոնությունից օգտվում էին միայն երկկողմանի ծնողագուրկ երեխաները, իսկ Նախագծով առաջարկվում է ավելացնել նաև Արցախյան պատերազմում գոհված ծնողների երեխաների համար արտոնություն:

Որոշման 3-րդ կետը Նախագծով առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ ենթակետով. <<6) ասեղնագործության, տիկնիկագործության և նկարչության խմբի համար՝ 3000 (երեք հազար) դրամ:>>, ինչը կապված է նշված խմբի ավելացման հետ:

Որոշման 5-րդ կետը Նախագծով առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով. <<4) դատարանի վճռով ծնողներից մեկին անգործունակ ճանաչված ընտանիքների երեխաների համար:>>, ինչ նս նախկինում չի եղել:

Քանի որ Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի Մարզի Հրազդանի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզների և արտադարձական դաստիարակության հաստատությունների կողմից 2021 թվականին մատուցվող ծառայությունների Դիմաց տեղական վճարի դրույքաչափերը և կիրառվող արտոնությունները հաստատելու մասին» N 148-Ն որոշումը կրում է նորմատիվ բնույթ, ուստի նրա մեջ կատարվող փոփոխության նախագիծը նս կրում է նորմատիվ բնույթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 25-ի
N 13 որոշման



Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 14-ի
N 151 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 78

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավ ճարը	Աշխատավարձի չափը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	
1	Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ	Համայնքի ղեկավար	Քաղաքական		1	400 000	0	0	400000	
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Քաղաքական		2	300 000	0	0	600000	
3		Համայնքի ղեկավարի խորհրդակցական	Հայեցողական		1	170 000		0	0	170000
4		Համայնքի ղեկավարի օգնական	Հայեցողական		1	250000		0	0	250000
5		Մանուկ քարտուղար	Հայեցողական		1	280 000		0	0	280000
6		Համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու	Հայեցողական		1	170 000		0	0	170000
7	Համայնքային ծառայողներ									
	Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության I.1-1	1		1	300 000	0	0	300000	

8	Աշխատակազմի Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-15	1	145000	0	0	145000
9	Աշխատակազմի Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-16	1	145000	0	0	145000
10	Աշխատակազմի Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-16	1	125000	0	0	125000
11	Աշխատակազմի Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-17	1	125000	0	0	125000
12	Աշխատակազմի Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-18	1	125000	0	0	125000
13	Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-16	1	112500	0	0	112500
14	Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-17	1	112500	0	0	112500
15	Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.3-1	1	101000	0	0	101000

Հրազդանի
համայնքապետարանի
աշխատակազմ

Ֆինանսական բաժին

16	բաժնի պետ	Համայնքային ծառայության	2.1-1	1	280 000	0	0	280000
17	բաժնի պետի տեղակալ	Համայնքային ծառայության	2.2-1	1	250 000	0	0	250000
18	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-1	1	145000	0	0	145000
19	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-2	1	145000	0	0	145000
20	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-1	1	125000	0	0	125000
21	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-2	1	125000	0	0	125000

Հրազդանի
համայնքապետարանի
աշխատակազմ

22	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-3	1	125000	0	0	125000
23	1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	112500	0	0	112500

Հարկային բաժին

24	բաժնի պետ	Համայնքային ծառայության	2.1-2	1	280 000	0	0	280000
25	բաժնի պետի տեղակալ	Համայնքային ծառայության	2.2-2	1	250 000	0	0	250000
26	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-3	1	145000	0	0	145000
27	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-4	1	125000	0	0	125000
28	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-5	1	125000	0	0	125000
29	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-6	1	125000	0	0	125000
30	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-7	1	125000	0	0	125000
31	1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-2	1	112500	0	0	112500
32	1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-3	1	112500	0	0	112500
33	1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-4	1	112500	0	0	112500
34	1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-5	1	112500	0	0	112500
35	1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-6	1	112500	0	0	112500

Հրազդանի
համայնքապետարանի
աշխատակազմ

Տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժին

36	բաժնի պետ	Համայնքային ծառայության	2.1-3	1	280 000	0	0	280000
37	բաժնի պետի տեղակալ	Համայնքային ծառայության	2.2-3	1	250 000	0	0	250000
38	Գլխավոր մասնագետ-ճարտարապետ	Համայնքային ծառայության	2.3-4	1	145000	0	0	145000
39	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-5	1	145000	0	0	145000
40	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-6	1	145000	0	0	145000
41	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-7	1	145000	0	0	145000
42	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-8	1	125000	0	0	125000
43	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-9	1	125000	0	0	125000
44	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-10	1	125000	0	0	125000
45	1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-7	1	112500	0	0	112500

Հրազդանի
համայնքապետարանի
աշխատակազմ

Տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժին

46	բաժնի պետ	Համայնքային ծառայության	2.1-4	1	280 000	0	0	280000
47	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-8	1	145000	0	0	145000
48	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-9	1	145000	0	0	145000

Հրազդանի
համայնքապետարանի
ու՛նիտուսիտոս

49	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-10	1	145000	0	0	145000
50	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-11	1	125000	0	0	125000

Բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժին

51	բաժնի պետ	Համայնքային ծառայության	2.1-5	1	280 000	0	0	280000
52	բաժնի պետի տեղակալ	Համայնքային ծառայության	2.2-4	1	250 000	0	0	250000
53	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-11	1	145000	0	0	145000
54	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-12	1	125000	0	0	125000
55	Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-13	1	125000	0	0	125000
56	Ի-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-8	1	112500	0	0	112500
57	Ի-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-9	1	112500	0	0	112500
58	Ի-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-10	1	112500	0	0	112500

Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ

Կրթության, մշակույթի և սպորտի բաժին

59	բաժնի պետ	Համայնքային ծառայության	2.1-6	1	280 000	0	0	280000
60	բաժնի պետի տեղակալ	Համայնքային ծառայության	2.2-5	1	250 000	0	0	250000
61	Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-12	1	145000	0	0	145000

62	Հրագրանի համայնքապետարանի աշխատակազմ	Գլխավոր մանագետ	Համայնքային ծառայության	2.3-13	1	145000	0	0	145000
63		Առաջատար մանագետ	Համայնքային ծառայության	3.1-14	1	125000	0	0	125000
64		Առաջատար մանագետ	Համայնքային ծառայության	3.1-15	1	125000	0	0	125000
65		1-ին կարգի մանագետ	Համայնքային ծառայության	3.2-11	1	112500	0	0	112500
66		1-ին կարգի մանագետ	Համայնքային ծառայության	3.2-12	1	112500	0	0	112500
67		1-ին կարգի մանագետ	Համայնքային ծառայության	3.2-13	1	112500	0	0	112500
68		1-ին կարգի մանագետ	Համայնքային ծառայության	3.2-14	1	112500	0	0	112500

Ներքին աուդիտի բաժին

69	Հրագրանի համայնքապետարանի աշխատակազմի	բաժնի պետ	Համայնքային ծառայության	2.1-7	1	280 000	0	0	280000
70		Գլխավոր մանագետ- ատյիտոր	Համայնքային ծառայության	2.3-14	1	145000	0	0	145000

Առանձնացված ստորաբաժանում

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին

71	Հրագրանի համայնքապետարանի աշխատակազմ	բաժնի պետ	Համայնքային ծառայության	1.3-1	1	256 600	0	0	256600
72		1-ին կարգի մանագետ	Համայնքային ծառայության	3.2-15	1	133 600	0	0	133600

Տեխնիկական սպասարկման անձնակազմ

73		Վարորդ	Տեխնիկական սպասարկման		1	200 000	0	0	200000	
74		Գործավար	Տեխնիկական սպասարկման		1	140 000	0	0	140000	
75	Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ	Վարչական շնորհ անվտանգության պատասխանատու	Տեխնիկական սպասարկման		1	150 000	0	0	150000	
76		Համակարգչային ծրագրերի և տեխնիկայի սպասարկող	Տեխնիկական սպասարկման		1	162 000	0	0	162000	
77		Օպերատոր	Տեխնիկական սպասարկման		1	150000	0	0	150000	
			ԸՆԴԱՄՆՆԸ		78					13043200

Հավելված 1
 Հրազդան համայնքի ակադեմի
 2021 թվականի փետրվարի 25-ի
 N 14 որոշման
 Հավելված 13
 Հրազդան համայնքի ակադեմի
 2020 թվականի դեկտեմբերի 14-ի
 N 152 որոշման



ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույթաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1		Տնօրեն	1	140000	140000
2		Մամուլավար	1	93300	93300
3		Պատասխանատու	2,33(56դ/ժ)	93300	21700
4		Պատասխանատու կենտրոնականի	3,9(93,5դ/ժ)	93300	363481
5		Պատասխանատու ջուրային	1(24դ/ժ)	93300	93300
6		Պատասխանատու տեղեկատվ.	0,5(12դ/ժ)	93300	46650
7		Պատասխանատու սպառնալուծի	2,66(64դ/ժ)	93300	248800
8		Պատասխանատու շվի-քուրթակ կլանիչային	1,33(32դ/ժ)	93300	124400
9	Եր. Քոչարի անվան մանկ.արվեստի դպրոց	Պատասխանատու բանակ	0,83(20դ/ժ)	93300	77750
10		Պատասխանատու երգչախմբի	0,5(12դ/ժ)	93300	46650
11		Պատասխանատու երգչախմբի օգնական	0,48(11,5դ/ժ)	93300	44706
12		Պատասխանատու ընթացակարգ	0,42(10դ/ժ)	93300	38875
13		Պատասխանատու անասնաբույժ	0,25(6դ/ժ)	93300	23325
14		Պատասխանատու երգչախմբի օգնական	1(24դ/ժ)	93300	93300
15		Օգնական հաշվապահ	1	93300	93300
16		Գործակալ	1	93300	93300
17		Հովանավար	1	93300	93300
18		Պահակ	1	93300	93300
	Ընդամենը		21.2		2025437



Հավելված 2
 Հրազդան համայնքի ավագանու
 2021 թվականի փետրվարի 25 -ի
 N 14 որոշման
 Հավելված 14
 Հրազդան համայնքի ավագանու
 2020 թվականի դեկտեմբերի 14 -ի
 N 152 որոշման

ՀԱՍՏԻՔԱՆՈՒՑԱԿ

Հրազդան համայնքի Կուստան Զարյանի անվան մանկական արվեստի դպրոց ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հատիքի անվանումը	Հատիքային միավորը	Պաշտոնային դրույթաչափը	Աշխատավարձի չափը	
1	2	3	4	5	6	
1		Տնօրեն	1	120000	120000	
2		Փոխտնօրեն	1	93300	93300	
3		Գլխավոր հաշվապահ	1	93300	93300	
4		Դասուսու ընթացակետի	3,4(80դ/ժ)	93300	93300	311000
5		Դասուսու սովորողի	1,17(28դ/ժ)	93300	93300	108850
6		Դասուսու կենդանակետի	1,33(32դ/ժ)	93300	93300	124400
7		Դասուսու ջեփարի	1,08(26դ/ժ)	93300	93300	101075
8	Կուստան Զարյանի անվան արվեստի դպրոց	Դասուսու երաժշտականության կրթականության	0,8(19դ/ժ)	93300	93300	73863
9		Դասուսու երգչախմբի	0,5(12դ/ժ)	93300	93300	46650
10		Դասուսու ընտրամի	1,7(40դ/ժ)	93300	93300	155500
11		Դասուսու կրթական կազմակերպության	2(48դ/ժ)	93300	93300	186600
12		Դասուսու լիկայի	1(24դ/ժ)	93300	93300	93300
13		Դասուսու ջութակի	1(24դ/ժ)	93300	93300	93300
14		Նվագախումբ	0,42(10դ/ժ)	93300	93300	38875
15		Դասուսու բասոյրների	1(24դ/ժ)	93300	93300	93300
16		Դասուսու սարի	1(24դ/ժ)	93300	93300	93300
17		Գործակար	1	93300	93300	93300
18	Տնտեսագետ	1	93300	93300	93300	
19	Հավերժարար	1	93300	93300	93300	
20	Պահակ	1	93300	93300	93300	
Ընդամենը			23.4		2199813	



Հավելված 3
 Հրազդան համայնքի ավագանու
 2021 թվականի փետրվարի 25-ի
 N 14 որոշման
 Հավելված 15
 Հրազդան համայնքի ավագանու
 2020 թվականի դեկտեմբերի 14-ի
 N 152 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿ

Հրազդան համայնքի Արամ խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույթաչափը	Աշխատավարձի չափը
1		3	4	5	6
1		Տնօրեն	1	125000	125000
2		Փոխտնօրեն	1	93300	93300
3		Գլխավոր հաշվապահ	1	93300	93300
4		Դասատու երաժշտ. գրավանդաբան	0,56(13,5դ/ժ)	93300	52481
5		Դասատու դաշնամուրի	5,58(134դ/ժ)	93300	520925
6		Դասատու սոփեթայի	1,31(31,5դ/ժ)	93300	122456
7		Դասատու ջութի	0,75(18դ/ժ)	93300	69975
8		Դասատու ջութակի	0,86(20դ/ժ)	93300	77750
9		Դասատու կլառնետի	1,33(32դ/ժ)	93300	124400
10		Դասատու կիթառի	2,92(70դ/ժ)	93300	272125
11		Դասատու վոկալի	1,18(28,5դ/ժ)	93300	110794
12		Դասատու փողերի	1,25(30դ/ժ)	93300	116625
13		Դասատու քնայի	1,33(32դ/ժ)	93300	124400
14		Դասատու քանոնի	0,86(20դ/ժ)	93300	77750
15		Դասատու ընտրովի	0,66(16դ/ժ)	93300	62200
16		Դասատու անսամբլի	0,58(14դ/ժ)	93300	54425
17		Կենտրոնացման կենտրոնացման Գործավար	1(24դ/ժ)	93300	93300
18		Տնօրենի օգնական	1	93300	93300
19		Տնօրենի օգնական	1	93300	93300
20		Հավանաբար	1	93300	93300
21		Դրսնագրի	1	93300	93300
22		Պահակ	1	93300	93300
Ընդամենը			28.17		2657706

թիվ 1 երաժշտական դպրոց



Հավելված 4
Հրազդան համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 25-ի
N 14 որոշման
Հավելված 16
Հրազդան համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 14-ի
N 152 որոշման

ՀԱՍՏԻՔԱՆՈՒՑԱԿ
Հրազդան համայնքի Առևտրաբաշխման անվան թիվ 2 երաժշտական դպրոց ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույթաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1		Տնօրեն	1	125000	125000
2		Փոխտնօրեն	1	93300	93300
3		Գլխավոր հաշվապահ	1	93300	93300
4		Պատասխանատու	7.83(188դ/ժ)	93300	730850
5		Պատասխանատու	2.08(50դ/ժ)	93300	194375
6		Պատասխանատու	1.08(26դ/ժ)	93300	101075
7		Պատասխանատու	1.58(38դ/ժ)	93300	147725
8		Պատասխանատու	2.08(50դ/ժ)	93300	194375
9		Պատասխանատու	2.17(52դ/ժ)	93300	202150
10		Պատասխանատու	1.25(30դ/ժ)	93300	116625
11	Թիվ 2 երաժշտական դպրոց	Պատասխանատու	2.13(51դ/ժ)	93300	198263
12		Պատասխանատու	1.67(40դ/ժ)	93300	155500
13		Պատասխանատու	0.94(22,5դ/ժ)	93300	87469
14		Պատասխանատու	1.15(27,5դ/ժ)	93300	106906
15		Պատասխանատու	0.63(15դ/ժ)	93300	58313
16		Պատասխանատու	0.58(14դ/ժ)	93300	54425
17		Պատասխանատու	1.88(45դ/ժ)	93300	174938
18		Պատասխանատու	1	93300	93300
19		Պատասխանատու	1	93300	93300
20		Պատասխանատու	1	93300	93300
21	Պատասխանատու	1	93300	93300	
22	Պատասխանատու	1	93300	93300	
	Ընդամենը		35.05		3301089



Հավելված 5
Հրագրված համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 25-ի
N 14 որոշման
Հավելված 17
Հրագրված համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 14-ի
N 152 որոշման

ՀԱՍՏ-ՔԱՆՈՒՑԱԿ

Հրագրված համայնքապետարանի ենթակայության << Արտակ Ռաֆայելյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց >> հիմնարկ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույթաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Ա. Ռաֆայելյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց բյուջեային հիմնարկ	Տնօրեն	1	140000	140000
2		Ռեանտվար	1	100000	100000
3		Հաշվապահ	1	93300	93300
4		Բուժօրր	1	93300	93300
5		Մարզիչ ձյուր	1.33	93300	124089
6		Մարզիչ ձյուր	1	93300	93300
7		Մարզիչ ցանկալից	1	93300	93300
8		Մարզիչ ֆուտբոլ	1	93300	93300
9		Մարզիչ բոցցտանդարտ	1	93300	93300
10		Մարզիչ թեմամարտաբուն	1	93300	93300
11		Հանրեճակահ	1	93300	93300
12		Հավաքարար	1	93300	93300
13		Տնօրեն	1	93300	93300
14		Դռնադրան	1	93300	93300
15		Պահակ	1	93300	93300
			15.33		1483689

1. ԽՍՀՄ կամ ՀՀ վաստակավոր մարզի կրթում ունենալու դեպքում տրվում է լրավճար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով :

2. ԽՍՀՄ կամ ՀՀ սպորտի վարչախոսի կրթում ունենալու դեպքում տրվում է լրավճար՝ 30000 (երեք հազար) ՀՀ դրամի չափով :



Հավելված 6
Հրագրան համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 25-ի
N 14 որոշման
Հավելված 18
Հրագրան համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 14-ի
N 152 որոշման

ՀԱՍՏԻՔԱՆՈՒՑԱԿ
հիմնարկ

Հրագրան համայնքի Վ. Զաբարյանի անվան երիտասարդական մարզանշակույթային ուսումնական կենտրոն բյուջետային

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույթաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1		Տնօրեն	1	140000	140000
2		Հաշվապահ	1	93300	93300
3		Բուժքույր	1	93300	93300
4		Գործավար	1	100000	100000
5		Մարզիչ, քանդվոր	1	120000	120000
6		Մարզիչ, բեքցամարտ	1	120000	120000
7		Մարզիչ, բազմամարտ, ուժային կրամարտ	1	120000	120000
8		Մարզիչ, ծանրամարտ	1	120000	120000
9		Մարզիչ, ձուլ	1	120000	120000
10		Մարզիչ, ձուլ	1.5	120000	180000
11		Թմբակահար կար ու. ձև	1	93300	93300
12		Թմբակահար սանթրոնադրոնաթան	1	93300	93300
13		Թմբակահար կոնստրուկտոր	1	93300	93300
14		Թմբակահար վարչապետ	1	93300	93300
15		Տնտեսավար	1	93300	93300
16		Հավաքագր	2	93300	186600
17		Պահակ	1	93300	93300
	Ընդամենը		18.5		1953000

1. ԽՍՀՄ կամ ՀՀ վաստակավոր մարզի կրկնաժամկետ, դեպքում ստիպում է ցրավճար - 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով :

2. ԽՍՀՄ կամ ՀՀ արտոսի վարչախոսի կրկնաժամկետ, դեպքում ստիպում է ցրավճար - 30000 (երեք հազար) ՀՀ դրամի չափով :



Հավելված 7
 Հրագրան համայնքի ավագանու
 2021 թվականի փետրվարի 25-ի
 N 14 որոշման
 Հավելված 19
 Հրագրան համայնքի ավագանու
 2020 թվականի դեկտեմբերի 14-ի
 N 152 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
Հրագրան համայնքի մակապատանեկան ստեղծագործական կենտրոն

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային որակաչանիք	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	ՄՍԿ	Տնօրեն	1	110000	110000
2		Փոխտնօրեն	1	93300	93300
3		Գեղարվեստական և երաժշտ. բաժնի վարիչ	1	93300	93300
4		Գլխավոր հաշվապահ	1	93300	93300
5		Խմբավար	1	93300	93300
6		Խմբավար	1	93300	93300
7		Խմբավար	1	93300	93300
8		Խմբավար	0.5	95400	47700
9		Խմբավար	1	93300	93300
10		Խմբավար	1	93300	93300
11		Խմբավար	1	93300	93300
12		Խմբավար	1	93300	93300
13		Խմբավար	1	93300	93300
14		Խմբավար	1	93300	93300
15		Համահարուցող	1	93300	93300
16		Շրջապահ	1	93300	93300
17		Բաժնիցի	1	93300	93300
18		Պահակ	1	93300	93300
Ընդամենը			17.5		1650500

Հավելված
 Հրազդան համայնքի ավագանու
 2021 թվականի փետրվարի 25 -ի
 N 15 որոշման

Հավելված
 Հրազդան համայնքի ավագանու
 2020 թվականի դեկտեմբերի 14-ի
 N154 որոշման



ՀԱՍԻՔԱՅՈՒՑԱԿ

«Հրազդանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության

Աշխատակիցների թվաքանակը՝ 15

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	«Հրազդանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	Տնօրեն	1	100000	100000
2		Հաշվապահ	1	95000	95000
3		Գրադարանավար	15	93300	1399500
	Ընդամենը		17		1594500



Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 25-ի
N16 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 14-ի N156 որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հրազդանի համայնքապետարանի <<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկի հաստրքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

Աշխատակիցների թվաքանակը՝ 94

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	<<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկ	Տնօրեն	1	290,000	290,000
2		Տնօրենի տեղակալ	1	200,000	200,000
3		Գլխավոր ճարտարագետ	1	135,000	135,000
4		Աղբահանության վարձերի գանձման պատասխանատու համակարգող	1	130,000	130,000
5		Գլխավոր հաշվապահ	1	150,000	150,000
6		Հաշվապահ	1	95,000	95,000
7		Համակարգչային օպերատոր	1	110,000	110,000
8		Համակարգչային օպերատոր	1	93,500	93,500
9		Մեքենա-մեխանիզմների պա - տասխանատու	1	250,000	250,000
10		Գլխ. մասնագետ	7	120,000	840,000
11		Մասնագետ	1	93,500	93,500
12		Մեխանիզատոր / JSB/	1	250,000	250,000
13		Մեխանիզատոր	1	200,000	200,000
14		Մեխանիզատոր /հիմնական/	2	130,000	260,000
15		Մեխանիզատոր /սեզոնային/	4	120,000	480,000
16		Մեխանիզատոր	1	110,000	110,000
17		Վարորդ	4	130,000	520,000
18		Վարորդ	9	100,000	900,000
19		Բանվոր	8	120,000	960,000
20		Բանվոր	12	100,000	1,200,000
21		Ավտոփականագործ	1	130,000	130,000
22		Պահեստապետ	1	100,000	100,000
23		Պահակ	1	93,500	93,500
24		Էլ. եռակցող	1	140,000	140,000
25		Տեսուչ աղբահեռացման վարձի գանձման/ Սահմանված գումարի 100% հավաքագրելու դեպքում վճարել 13%,100%-ից ավելի հավաքագրելու դեպքում վճարել 20% ավել գանձած գումարի հանար: Միջին աշխատավարձը հաշվարկվում է նախորդ տարվա համապատասխան ամսվա համար վճարված աշխատավարձի չափով:	11	տոկոսային վարձատրություն	
	Ընդամենը		74		7,730,500
1		Բանվոր /ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի Հայաստանյան գրասենյակի հետ իրականացվող համատեղ ծրագրով (ժամկետային օրավարձով)/	20	6,000	9,030,500
	Ընդամենը		94		16,761,000



Հավելված
Հրագրան համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 25 -ի
N 17 որոշման

Հավելված
Հրագրան համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 14-ի
N157 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հրագրանի համայնքապետարանի <<Մաքուր Հրագրան>> համայնքային ոչ
առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային
դրույքաչափը

Աշխատակիցների թվաքանակը՝ 98

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային և միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	<<Մաքուր Հրագրան >> ՀՈԱԿ	Տնօրեն	1	280,000	280,000
2		Փոխտնօրեն	1	155,000	155,000
3		Հաշվապահ	1	115,000	115,000
4		Առաջատար մասնագետ	1	150,000	150,000
5		Մասնագետ	5	100,000	500,000
6		Պահեստապետ	1	110,000	110,000
7		Էլ. փականագործ	1	93,500	93,500
8		Բանվոր	1	93,500	93,500
9		Բանվոր	5	100,000	500,000
10		Վարորդ	2	93,500	187,000
11		Վարորդ	1	110,000	110,000
12		Բարձիչավար	1	110,000	110,000
13		Ծաղկաբույծ	3	93,500	280,500
14		Հավաքարար	27	95,000	2,565,000
	Ընդամենը		51		5,249,506
1		Բանվոր /այլընտրանքային ծառայող/	7	30,000	2,100,000
2		Բանվոր /ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի Հայաստանյան գրասենյակի հետ իրականացվող համատեղ ծրագրով (Ժամկետային, օրավարձով)/	40	6,000	16,950,500
	Ընդամենը		98		24,300,006

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 25-ի
N 18 որոշման

Հավելված թիվ 2
Հրազդան քաղաքային համայնքի ավագանու
2009 թվականի դեկտեմբերի 18-ի
թիվ 143 որոշման

Բաղկացած է 6 էջից


Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ —

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«Հաստատված է»
ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 25-ի
N 18 որոշմամբ

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց ռեգիստրի
գործակալության կողմից
«13» հունվար 2010 թ.
Գրանցման համարը՝ 33.210.01965
ՀՎՀՀ՝ 03018844

Համայնքի ղեկավար՝

Ս.Միքայելյան

«13» հունվար 2010թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը
գրանցվել է «___» _____ 2021թ.
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ՄԱՔՈՒՐ ՀՐԱԶԴԱՆ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՀՐԱԶԴԱՆ 2021

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպություն է:
- 1.2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
- 1.3. Կազմակերպության հիմնադիրը Հրազդան համայնքն է /այսուհետ՝ Համայնք/ ի դեմս Հրազդան համայնքի ավագանու /այսուհետ՝ Հիմնադիր/, իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Հրազդան համայնքի ղեկավարը:
- 1.4. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 1.5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
- 1.6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
- 1.7. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
- 1.8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկյա հաստատությունների և կազմակերպությունների հետ:
- 1.9. Կազմակերպության անվանումն է՝
- հայերեն լրիվ՝ «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
- 1.10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝
Հայաստանի Հանրապետություն, մարզ Գոտայք, քաղաք Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

- 2.1. Կազմակերպության գործունեության առարկան և հիմնական նպատակներն են՝
 - 2.1.1. համայնքային վարչական տարածքի սանիտարական մաքրում.
 - 2.1.2. կանաչ տարածքների բարելավում և սպասարկում.
 - 2.1.3. անձրևաջրերի հեռացման ցանցի սպասարկում.
 - 2.1.4. շատրվանների, այգիների, խաղահրապարակների սպասարկում.
 - 2.1.5. եզրաքարերի վերանորոգում.
 - 2.1.6. սելավատարի սպասարկում.
 - 2.1.7. համայնքի ենթակայության շենքերի և շինությունների սպասարկում.
 - 2.1.8. ճանապարհային նշանների տեղադրում և սպասարկում.

2.2. Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով պետական կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

Հիմնադիրը թույլ է տալիս Կազմակերպությանը իրականացնել համայնքային նշանակության ոչ տարանցիկ ճանապարհների սալապատման, խճապատման, երթուղիների մասի և մայթերի բարեկարգման ձեռնարկատիրական գործունեությունը:

2.3. Կազմակերպության իրավունքերը կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքում և սահմանված կարգով:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում է Հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

3.2.1. Կազմակերպության հիմնադրումը,

3.2.2. Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների սահմանումը,

3.2.3. Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

3.2.4. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

3.2.5. Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

3.2.6. Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

3.2.7. Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

3.3. Լիազորված համայնքային մարմինը (Հրագրան համայնքի ղեկավար) իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում չկատարման, ոչ պատշաճ կատարման համար:

3.4. Հրագրան համայնքի ղեկավարը՝

3.4.1. սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

3.4.2. վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ,

3.4.3. կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, կարգադրություններն ու ցուցումները,

3.4.4. լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

3.4.5. վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված համայնքային սեփականության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,

3.4.6. վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

3.4.6. հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունը և տարեկան հաշվեկշիռը,

3.4.7. իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ,

3.4.8. հաստատում է Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը,

3.4.9. իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.5. Կազմակերպության գործադիր մարմինը՝

